Հայաստանի Հանրապետության ոստիկանության

Կրթահամալիր

Ուսումնական կենտրոն

Ուսումնական ծրագիր

Ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման <<Կրիմինալիստիկա>> առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի ուսումնական կենտրոնի
<<Հատուկ պատրաստականություն>>
կրթաճյուղի 01.06.2018թ.-ի նիստում
արձանագրություն թիվ 4

ք.ԵՐԵՎԱՆ

2018Թ.

1.Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմուքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 14 ժամ,որից՝

.դասախոսություն -12ժամ

.գործնական – 2ժամ

2.<<Կրիմինալիստիկա>> առարկայի դասընթացի ուսուցման նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է՝ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղոցնող ծառայողների մոտ ձևավորել ոստիկանության ծառայողի կողմից դեպքի վայրում իրավիճակը գնահատելու,հանցագործության հետքերը հայտնաբերելու և ճանաչելու տեսական մասնագիտական գիտելիքներ,ինչպես նաև զարգացնել իր իրավասության սահմաններում անհետաձգելի գործողություններ իրականացնելու հմտություններ և կարողություններ:

Առարկայի դասընթացի դասավանդման ընթացքում լուծվումմ են հետևյալ խնդիրները՝

1.Կրիմինալիստիկայի հիմնական գիտական դրույթների վերաբերյալ ձևավորել ընդհանուր գիտելիքներ:

2.Ծանոթացնել մարդու մոտ արտաքին հատկանիշների նկարագրման համակարգին,<<Բանավոր պատկերի>>նկարագրման մեթոդիկային, հետքերի առաջացման մեխանիզմին և դրանց կիրմինալիստիկական նշանակությանը, սառը և նետողական զենքերի քրեագիտական պահանջներին, փաստաթղթերի կեղծման եղանակներին ու դրանց ճանաչման ձևերին և դեպքի վայրում ոստիկանի գործողություններին:

3.Առարկայի դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները.

Դասընթացի ավարտից հետո սովորողը պատք է կարողանա՝

1,Ներկայացնել անձի արտաքին հատկանիշների ընդհանուր դրույթները և <<Բանավոր պատկերի>>նկարագրման մեթոդիկային՝ այն կիրառելով գործնականում

2.Ցուցաբերել հետքերի հայտնաբերման և պահպանման հմտություններ

3.Ներկայացնել սառը և նետողական զենքերի քրեագիտական պահանջները

4.Տիրապետել փաստաթղթերում հնարավոր կեղծիքների հայտնաբերման հմտություններին

5.Ներկայացնել դեպքի վայրում ոստիկանի կողմից իրականացվող գործողությունները

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Առարկայի դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ ինչպիսիք են՝<<Ծառայության իրականացման մարտավարություն>> և <<Հատուկ տեխնիկա>>:

5.Առարկայի դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների,գործնական պարապմունքների և սեմինարների տեսքով,որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով:Դասավանդման ընթացում օգտագործվում են տեսանյութեր դիդակտիկ պաստառներ:Գործնական պարապմունքների ընթացքում պրակտիկ վարժությունների,իրավիճակային խնդիրների լուծումներով սովորողների մոտ ամրպնդվում են գործնական անհրաժեշտ գիտելիքներ,որոնք մասնագիտական գործունեության կարևոր պայման են:

Սովորողներին հաղորդած գիտելիքների և հմտությունների ինտեգրացիան և ամրապնդումն ապահովելու համար ուսուցման ընթացքում անց են կացվում գործնական պարապմունքներ:

6.Ուսումնական նյութի բովանդակությունը

<u>Թեմա 1</u> Անձի կրիմինալիստիկական նույնացումը արտաքին հատկանիշներով:<<Բանավոր պատկերի>>նկարագրման մեթոդիկան:

<u>Թեմայի շրջանակներում ուսումնասիրվող հարցեր՝</u>

1.Արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը և նշանակությունը:

2.Ընդհանուր ֆիզիկական անատոմիական ֆունկցիոնալ և ուղեկցող հատկանիշները:

3.Անձի արտաքինի նկարագրման կարգը:

4.Անատոմիական հատկանիշների նկարագրման հերթականությունը:

5.Հատուկ նշանների հասկացությունը:

6.Բանավոր պատկերի կիրառումը հետախուզական և այլ նպատակներով:

<u>Թեմա 2</u> Հետքերի կրիմինալիստիկական նշանակությունը;Հետքերի առաջացման մեխանիզմը և դասակարգումը:

Թեմայի շրջանակներում ուսումնասիրվող հարցեր՝

1.Հետքերի հասկացությունը և կրիմինալիստիկական նշանակությունը:

2.Հետքերի առաջացման մեխանիզմը

3.Մարդու կողմից թողնված հետքեր

4.Տրանսպորտային միջոցների հետքեր

5.Զարդող գործիքների հետքեր

6.Հետքերը պահպանելու կարգը

<u>Թեմա 3</u> Սառը և նետողական զենքերին ներկայացվող քրեագիտական պահանջները:

Թեմայի շրջանակներում ուսումնասիրվող հարցեր՝

1.Սառը և նետողական զենքերի բնութագիրը

2.Սառը զենքերի կառուցվածքային առանձնահատկությունները

3.Սառը զենքը ճանարելու չափանիշները

4.Նետողական զենքի դասակարգումը

<u>Թեմա 4</u> Փաստաթղթերի կեղծման եղանակները և դրանց հատկանիշները

Թեմայի շրջանակներում ուսումնասիրվող հարցեր՝

1.Փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը

2.Անձնագրի ռեկվիզիտները

3.Փաստաթղթերի կեղծման եղանակները

<u>Թեմա 5</u> Ոստիկանի գործողությունները դեպքի վայրում

Թեմայի շրջանակներում ուսումնասիրվող հարցեր՝

1.Ոստիկանի գործողությունները կատարված հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիներից ահազանգ ստանալու դեպքում

2.Ոստիկանի գործողությունները հանցագործության կատարման վայրում

3.Դեպքի վայրի պահպանման կարգը

Գրականության ցանկ

1.Ա.Բախշինյան,Բ.Ալեքսանյան.Ս.Մարգարյան <<Կրիմինալիստիկա>>սխեմաների հավաքածու:Երևան2003թ.

2.Լ.Օհանյան կրիմինալիստիկան ՀՀ-ում Երևան 2007թ

3. .Լ.Օհանյան <կրիմինալիստիկան>դասագիրք Երևան 2010թ.

4.Զենքի մասին ՀՀ օրենք